

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵՒԱՅԼՔ****ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ
ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԷՍ**

Երկուշաբթի, 13 Յունուար, 2025-ին, երեկոյեան ժամը 18:30-ին, Սուրբ Ծննդեան տօնական հանդիսութեանց սեմին, ընդունուած սովորութեան համաձայն, Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի սաները հանդէս եկան Կաղանդի յայտագրով:

Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը դիմաւորեցաւ Ժառանգաւորաց վարժարանի օրհներգ «Սիրտ ի սիրտ» երգի հնչիւններու ներքոյ, ապա յոտնկայս երգուեցաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգը:

Երեկոյի բացման խօսքն ըրաւ Տիրացու Յովհաննէս Խումարեան՝ բարի գալստեան եւ Նոր Տարուայ շնորհաւորական խօսքեր ուղղելով ներկաներուն: Ապա Ժառանգաւոր վարժարանի եւ Ընծայարանի սաները հանդէս եկան խմբերգերով, մեներգերով, ասմունքներով, կատակերգական ներկայացմամբ եւ կիթառի կատարմամբ:

Հանդիսութեան վերջաւորութեան վարժարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան հրաւիրեց Գերաշնորհ Լուսարարապետ Սրբազան Հայրը՝ կատարելու իր շնորհաւորական խօսքն ու փակման աղօթքը:

ՏԱՐԵՄՈՒՏ 2025 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ինչպէս ամէն տարի, 2025-ին եւս Տարեմուտի կէս-գիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ վանքի Մեծ բակին մէջ, ուր հաւաքուած էին միաբան հայրեր, Ժառանգաւոր սաներ եւ Սաղիմահայեր:

Ճիշդ կէս-գիշերին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մեծ զանգերու զանգիւնով ազդարարուեցաւ Նոր Տարուան սկիզբը, ապա միաբանութեան եւ Ժառանգաւոր սաներու «Փառք ի բարձունս» երգով, Բարձրեալին գոհութիւն եւ փառք մատուցանելով աւետուեցաւ Նոր Տարուան մուտքը, որմէ յետոյ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան շնորհաւորեց ներկաներու Ամանորը եւ գալիք Սուրբ Ծնունդը:

Յաջորդ օրը առաւօտուն, 14 Յունուար, 2025-ին, Հին տոմարով Նոր Տարին, ժամը 8-ին, նախագահութեամբ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր՝ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն եւ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Պատարագէն յետոյ նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր՝ Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաները եւ Սաղիմահայ ժողովուրդը Սուրբ Աթոռոյս օրհներգի երգեցողութեամբ, թափօրով բարձրացան Պատրիարքարան, ուր նախ Սրբոց Թարգմանչաց սաներէն փոքրիկն Լուի Թագաւորեան յանուն վարժարանի աշակերտութեան եւ տեսչութեան հաճելի Ամանորի ուղերձ մը ընթերցեց՝ ուղղուած Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:

«Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր, Արժանապատիւ Տէր Հայրեր, յարգելի ուսուցիչներ, Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի սաներ, պատուարժան հիւրեր եւ ներկաներ.

Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսչութեան, քարտուղարութեան, ուսուցչական կազմի եւ աշակերտութեան անունով կ'ուզեմ Ձեզի փոխանցել ամենաջերմ մաղթանքները Սուրբ Ծննդեան եւ Ամանորի կապակցութեամբ: Թող գալիք օրերը լեցուած ըլլան համերաշխութեամբ, խաղաղութեամբ եւ աւելի պայծառ ապագայի խոստումով:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր,

Սուրբ Ծնունդը եւ մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնը կը լեցնէ մեր սրտերը յոյսով, խաղաղութեամբ եւ երախտագիտութեամբ: Այն մեզ կը յիշեցնէ այն սիրոյ եւ առաջնորդութեան մասին, որ Տէրը կ'առաջարկէ իր բոլոր զաւակներուն:

Սրբոց Թարգմանչաց վարժարանը կենսական դեր կը խաղայ հայկական ժառանգութեան պահպանման եւ տարածման գործին մէջ: Անոր պատերէն ներս մենք կը սնուինք մեր լեզուի իմաստութեամբ, մեր մշակուցի հարստութեամբ եւ մեր հաւատքի մնայուն արժէքներով: Վարժարանը պարզապէս կրթութեան վայր չէ, այլ սրբավայր ուր մենք աշակերտներս, կը սորվինք յարգել մեր անցեալը, ընդունիլ մեր ներկան եւ կառուցել ապագայ՝ արմատաւորուած սիրոյ եւ միասնութեան վրայ: Այստեղ ձեռք կը բերենք գիտելիք եւ քաջութիւն՝ դիմակայելու աշխարհի մարտահրաւէրներուն, խորապէս կապուած մնալով հայկական ինքնութեան:

Սրբազան Հայր, թող այս Նոր Տարին առատ օրհնութիւններ, առողջութիւն եւ խաղաղութիւն բերէ Ձեզ, եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան բոլոր անդամներուն: Մենք՝ Ձեր աշակերտները, հաւատարիմ կը մնանք Ձեր սերմանած արժէքները պաշտպանելուն, եւ կը մաղթենք ուժ՝ շարունակելու նուիրումով առաջնորդել մեզ դէպի լուսաւոր ապագայ:

Թող այս Նոր Տարին ուրախութիւն եւ խաղաղութիւն բերէ յամայն հայութեան եւ ողջ աշխարհին: Իսկ մեր ազգի միասնութիւնը զօրանայ եւ Աստուծոյ կամքով իրականանան մեր ժողովուրդի բոլոր երազանքները:

Սրբազան Հայր, կը խնդրենք Ձեր աղօթքն ու օրհնութիւնը հայկական բոլոր կրթական հաստատութիւններու բարգաւաճման համար, որպէսզի երիտասարդները մեծնան իմաստութեամբ, հաւատքով եւ քաջութեամբ՝ պատրաստ ընդունելու իրենց դերը որպէս մեր ժառանգութեան ջահակիրներ եւ խաղաղութեան ու բարի կամքի դեսպաններ:

Կը մաղթենք Ձեզի ուրախութեամբ լի Սուրբ Ծնունդ եւ յոյսերով լի Ամանոր:

Խորին յարգանքս եւ սրտաբոլիս շնորհաւորանքներով՝ Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտութիւն»:

Ապա բոլոր ներկաները մօտեցան Սրբազան Պատրիարքին աջը համբուրելու եւ ստացան մէկական նարինջ:

Տարեմուտի Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ նաեւ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, պատարագեց եւ քարոզեց Սուրբ Հրեշտակապետաց Վանքի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Դեւոնդ Մ. Վարդապետ Յովհաննիսեան:

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՏԷՄԻ ՄԷՋ

18 Յունուար, 2025-ին, Հայոց Սուրբ Ծնունդի առաւօտեան ժամը 9:30-ին, Իսրայէլի Ներքին գործոց նախարարութեան Քրիստոնեայ համայնքներու բաժնի վարիչ՝ Տիար Սեզար Մարճիէ եւ ոստիկանները այցելեցին Պատրիարքարան՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի Սուրբ Ծնունդը շնորհաւորելու եւ դէպի Բեթղեհէմ թափօրին հսկողութիւնն ապահովելու համար:

Ժամը 9:45-ին, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ժամբոս կիսուն Յունաց Սուրբ Եղիա վանքին առջեւ Լուսարարապետ Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին Պէյթ Ճալայի, Պէյթ Սահուրի քաղաքապետները, եւ Պաղեստինեան իշխանութեան ներկայացուցիչներ: Հիւրասիրութենէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորած ինքնաշարժերու թափօրը Ռաքէլի գերեզման առաջնորդող դուռէն անցնելով՝ առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ:

Քաղաքի մուտքին, ինքնաշարժերէն դուրս ելլելով, Լուսարարապետ Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները քալելով յառաջացան մինչեւ հրապարակ: Բարի գալուստի համար Բեթղեհէմի հրապարակին վրայ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Միաբանութեան դիմաւորելու եկած էին Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման, Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի, նահանգապետը եւ բարձրաստիճան զինուորականներ: Թափօրը, որուն երկու կողմէն Հ.Յ.Միութեան եւ Հ.Մ.Ը.Միութեան սկառտական խումբերը պատուի կեցած էին՝ «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղօղանջին ներքոյ բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր Լուսարարապետ Սրբազան շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն: Ապա բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման:

Յետ միջօրէի, ժամը 2-ին, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սուրբ Ծննդեան Տաճար եւ Սուրբ Այր: Ծրագալոյցի Սուրբ Պատարագը Սուրբ Այրին մէջ մատուց եւ «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Հայաստանէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռ ժամանած՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան՝ Հոգեշնորհ Տ. Ռուբէն Վարդապետ Զարգարեան: Ապա՝ Միաբանութիւնը պատարագիչ Հայր Սուրբի հանդիսապետութեամբ բարձրացաւ Հայոց Վանք. բազին մէջ կարդացուեցաւ Սուրբ Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Սրբազան արարողութիւններէն յետոյ, երեկոյեան ժամը 7-ին, Սուրբ Ծննդեան տօնին առիթով «Քաղա Նովա» պանդոկին մէջ Պատրիարքութեանս կողմէ տրուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն

խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի, Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման, նահանգապետը, բարձրաստիճան զինուորականներ եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներ:

Նոյն գիշեր, ժամը 10-ին, սկսաւ Սուրբ Ծննդեան գիշերային արարողութիւնը: Միաբանութիւնը՝ հանդիսապետութեամբ Հայաստանէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռ ժամանած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններէն, Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Եպիսկոպոս Յակոբեանի՝ Հայոց Վանքէն իջաւ Սուրբ Ծննդեան Տաճար եւ Սուրբ Այր: Ապա կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ:

Գիշերուայ ժամը 12-ին (որ է Յունուար 19-ի առաւօտեան) Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, իջաւ Սուրբ Ծննդեան Այր, ուր կարդացուեցաւ մեր Փրկչի Ծննդեան աւետիսը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս» երգը, աւետելով Քրիստոսի խաղաղութեան եւ ի մարդիկ հաճութեան բարի լուրը: Սուրբ Այրին մէջ կատարուած արարողութեան ներկայ էին նաեւ Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Տիար Ռամզի Խուրի, Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Անտոն Սալման եւ այլ պաշտօնեաներ, որոնք հանդիսապետ Լուսարարապետ Սրբազան Հօր Ծննդեան պատգամէն յետոյ իրենց շնորհաւորանքը յայտնելով՝ մեկնեցան:

Սուրբ Այրի արարողութենէն ետք, պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ, ուր ընթերցուեցան չորս Աւետարաններ: Ապա՝ ճաշու ժամերգութիւններէն ետք, Աւագ սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Հայաստանէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռ ժամանած՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետի պաշտօնակատար՝ Հոգեշնորհ Տ. Յարութիւն Վարդապետ Կիրակոսեան:

Սուրբ Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը՝ հանդիսապետութեամբ Գուգարաց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Եպիսկոպոս Յակոբեանի եւ առընթերակալութեամբ Հոգեշնորհ Տ. Եղիշէ Վարդապետ Ուշքունեանի եւ Տ. Ներսէհ Վարդապետ Ալոյեանի: Զրօրհնէքի հոգեպարար արարողութենէ ետք քարոզեց հանդիսապետ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Եպիսկոպոս Յակոբեան, ապա նախագահեց Սուրբ Յովհաննէս Մկրտչի նախատօնակին:

Յետ նախատօնակի կատարուեցան ճաշու ժամերգութիւններ, ապա Սուրբ Ծննդեան Այրին մէջ պատարագեց հանդիսապետ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Եպիսկոպոս Յակոբեան:

Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6-ին, Միաբանութիւնը թափօրով եւ «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանք, եւ տեսչարանին մէջ կարդացուեցաւ Սուրբ Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱԻ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ 155» ՈՍԿԷ
ՄԵՏԱԼՈՎ

2024 թուականի Դեկտեմբեր 30-ին Լոնտոնի մէջ տեղի ունեցած «Ծագումով Հա-

յեր» հաղորդաշարի կազմակերպած մրցանակաբաշխության Սուրբ Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Հոգեշնորհ Տ. Տիրան Վարդապետ Յակոբեան:

Մրցանակաբաշխության ընթացքին «Կոմիտաս Վարդապետ 155» ոսկէ մեդալով պարգևատրուեցան Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Սրբազան Հայրը եւ մրցանակաբաշխության ներկայ Հոգեշնորհ Տ. Տիրան Վարդապետ Յակոբեան:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր ոսկէ մեդալը հաղորդաշարի հեղինակ՝ Տիկին Մանանա Յակոբեան Երկուշաբթի, 20 Յունուար, 2025-ի առաւօտեան այցելեց Պատրիարքարան եւ անձամբ յանձնեց Պատրիարք Սրբազան Հօրը:

Պարգևի յանձնման ներկայ էին Հոգեշնորհ Տ. Տիրան Վարդապետ Յակոբեան, Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեան եւ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏ

Շաբաթ, 25 Յունուար, 2025-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, գլխաւորութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն Սուրբ Աթոռ ժամանած հիւր եկեղեցականները, Ժառանգաւոր Սաները եւ Սուրբ Երկրի տարբեր քաղաքներէն ուխտաւոր հայեր մեկնեցան դէպի Յորդանան գետ, ուր ձեռամբ հանդիսապետ Լուսարարապետ Սրբազան Հօր՝ կատարուեցաւ տարեկան Զրօրհնեաց արարողութիւնը:

Այս տարուան խաչ-քաւորն էր Ժառանգաւոր սաներէն Մարտին Նազարեան:

Յորդանանեան կողմէ գետափ եկած էին Ամմանի Պատրիարքական փոխանորդ՝ Հոգեշնորհ Տ. Աւետիս Ծ. Վարդապետ Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներու հետ:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ կատարուած են նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան, ազատուելով Պատրիարք Սրբազան Հօր Գաւազանակրի եւ անձնական քարտուղարի պաշտօնէն, իր ծառայութիւնը պիտի շարունակէ որպէս Սուրբ Թէոդորոս Զեռագրատան եւ Հելէն եւ էտուարտ Մարտիկեան Թանգարանի տեսուչ:

Հոգեշնորհ Տ. Սիոն Աբեղայ Թաքուշեան նշանակուած է Պատրիարք Սրբազան Հօր Գաւազանակիր եւ անձնական քարտուղար:

ԱՒՍՏՐԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ԱՅՅԵԼԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Ուրբաթ, 14 Փետրուար, 2025-ի առաւօտուն Աւստրիոյ եկեղեցիներու խորհուրդի անդամները դէպի Սուրբ Երկիր կատարած իրենց «Համերաշխութեան այցելութեան»

ընթացքին, առաջնորդութեամբ Կեդրոնական Եւրոպայի եւ Սկանտինաւիայի Հայրապետական պատուիրակ՝ Գերաշնորհ Տ. Տիրան Եպիսկոպոս Պետրոսեանի՝ այցելեցին Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ։ Հանդիպմանը ներկայ էր նաեւ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան։

Պատուիրակութիւնը բաղակացած էր Խորհուրդի վարչական հինգ անդամներէ եւ մէկ լրագրողէ։ Այցի նպատակն էր աջակցութիւն յայտնել քրիստոնէական համայնքներուն, որոնք կը բախուին քաղաքական, սոցիալական եւ տնտեսական դժուարութիւններու։ Այցելութեան կարեւոր խնդիրներէն է նաեւ տարածաշրջանին մէջ գործող միջազգային ծրագիրներու, ատոնց կարգին՝ EAPP-ի (*Ecumenical Accompaniment Programme in Palestine and Israel*) շրջանակներու մէջ իրականացուող աշխատանքներուն ծանօթանալը։ Այս ծրագիրները կարեւոր դեր կը կատարեն խաղաղութեան, արդարութեան եւ մարդու իրաւունքներու խթանման գործին մէջ։

Խորհուրդի անդամները հանդիպումներ պիտի ունենան նաեւ Յունաց եւ Լատինաց Պատրիարքներուն հետ՝ քննարկելու Սուրբ Երկրի քրիստոնեաներու իրավիճակը եւ ամրապնդելու միջ-եկեղեցական յարաբերութիւնները։

Հանդիպումէն յետոյ, Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան պատուիրակութեանն ուղղեկցեց դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար եւ տուաւ Մայր Տաճարի պատմականը, իսկ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան ուղեկցեց դէպի Հէլեն եւ էտուարտ Մարտիկեան թանգարան եւ տուաւ թանգարանի ցուցանմոյշներու բացատրականը։

ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ԳԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԸ ՄԷԿՏԵՂՈՒԱԾ ԵՆ ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ուրբաթ, 14 Փետրուար, 2025-ին, Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ տեղի ունեցաւ նշանակալից հանդիպում մը, որու ընթացքին Երուսաղէմի պատրիարքները եւ հոգեւոր պետերը, դեսպանները, գլխաւոր հիւպատոսները եւ դիւանագիտական առաքելութեանց ներկայացուցիչները հաւաքուած էին քննարկելու Սուրբ Երկրին մէջ գտնուող եկեղեցիներու եւ քրիստոնեաներու առջեւ ծառացած մարտահրաւէրները եւ գտնելու ուղիներ, որոնցմով դիւանագիտական կապերը կարող են նեցուկ ըլլալ քրիստոնեաներուն եւ պաշտպանել իրավիճակը Երուսաղէմի մէջ։ Հոգեւոր պետերը նաեւ ընդգծած են միջազգային համագործակցութեան կարեւորութիւնը տարածաշրջանին մէջ քրիստոնէական համայնքներու պատմական եւ քաղաքացիական դերի շարունակականութիւնն ապահովելու համար։

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ համագումարին ներկայ էին Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան եւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան։

Համաժողովի վերջաւորութեան հոգեւոր պետերը Կազայի ժողովուրդի արժանապատուութիւնն ու ներկայութիւնը պաշտպանելու մարդասիրական խնդրանքով մը հանդէս եկան։



PATRIARCHS AND HEADS OF THE CHURCHES IN JERUSALEM

A HUMANITARIAN PLEA FROM THE CHURCHES OF JERUSALEM: DEFENDING THE DIGNITY AND PRESENCE OF THE PEOPLE OF GAZA

Jerusalem, the Holy Land

February 14, 2025

As custodians of the Christian faith and conscience in this sacred land, we raise our voices in sorrow and steadfast resolve in the face of the ongoing suffering in Gaza. The devastation that has unfolded before the eyes of the world is a profound moral and humanitarian tragedy. Thousands of innocent lives have been lost, and entire communities stand in ruin, with the most vulnerable—children, the elderly, and the sick—enduring unimaginable hardship.

Amid this anguish, we are compelled to speak against the grave threat of mass displacement, an injustice that strikes at the very heart of human dignity. The people of Gaza, families who have lived for generations in the land of their ancestors, must not be forced into exile, stripped of whatever is left of their homes, their heritage, and their right to remain in the land that forms the essence of their identity. As Christians, we cannot be indifferent to such suffering, for the Gospel commands us to uphold the dignity of every human being. The words of our Lord remind us: “Woe to those who make unjust laws, to those who issue oppressive decrees, to deprive the poor of their rights and withhold justice from the oppressed” (Isaiah 10:1-2).

In this critical moment, we acknowledge and support the position of His Majesty King Abdullah II of Jordan, President El-Sisi of Egypt, and others, whose firm and principled stance have remained clear and unwavering in rejecting any attempt to uproot the people of Gaza from their land. Their relentless efforts to provide humanitarian aid, appeal to the world’s conscience, and insist on the protection of civilians exemplify leadership at its highest level of responsibility.

In this same spirit, we also call for the release of all captives from both sides so that they can be safely reunited with their families. We additionally appeal to all people of faith, to governments, and to the international community to act swiftly and decisively to halt this catastrophe. Let there be no justification for the uprooting of a people who have already suffered beyond measure. Let the sanctity of human life and the moral obligation to protect the defenseless outweigh the forces of destruction and despair. We call for an immediate unfettered humanitarian access to those in desperate need. To abandon them now would be to abandon our shared humanity.

As we lift our prayers for those in mourning, for the wounded, and for those who remain steadfast in the land of their forefathers, we remember the promise of Scripture: “The Lord upholds all who fall and lifts up all who are bowed down” (Psalm 145:14). May the God of mercy strengthen the afflicted, soften the hearts of those who hold power, and bring forth a peace that upholds justice, preserves human dignity, and safeguards the presence of all people in the land to which they belong.

—The Patriarchs and Heads of the Churches in Jerusalem

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՏԻԱՐ ՄԱՐՔՕ ՌՈՒՊԻՕ ԱՅՅԵԼԵՅ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

Կիրակի, 16 Փետրուար, 2025-ի առաւօտուն Ամերիկայի միացեալ նահանգներու պետքարտուղար՝ Տիար Մարքօ Ռուպիօ կատարեց իր առաջին պաշտօնական այցը Սուրբ Յարութեան Տաճար:

Դիմաւորման արարողութեան երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ էին Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան եւ Սուրբ Յարութեան Տաճարի նախկին տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեան:

ԱՐՆՈՆԱՅԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՅՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԻՆ ՀԵՏ

19 Փետրուար, 2025-ի առաւօտուն, Արնոնայի հարցով Պատրիարքութեանս Կալւածոց տեսուչ՝ Դերաշնորհ Տ. Կորին Եպիսկոպոս Բաղդասարեան եւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան հանդիպում ունեցան Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Դերապայծառ Տ. Ատուլֆօ Արքեպիսկոպոս Տիտօ Լլանային հետ:

ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԳՈՅՔԻ ԲՈՆԱԳՐԱԽՄԱՆ ԵՒ ՊԱՐՏԱԴՐՈՒՈՂ ԱՆՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆ ԱՀՈՒԼԻ ՊԱՐՏՔԻ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ ՆԱՄԱԿ ԳՐԱԾ Է ԻՍՐԱՅԷԼԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

20 Փետրուար, 2025-ին Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան Երուսաղէմի քաղաքապետարանի կողմէ Հայոց Պատրիարքութեան գոյքի բրոնազրաման անարդար որոշման եւ Պատրիարքութեանս պարտադրուող անտրամաբանական ահուելի պարտքի առնչութեամբ նամակ գրած է Իսրայէլի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Բենիամին Նէթանեահուի:

Նորին Ամենապատուութիւնն իր նամակին մէջ մասնաւորապէս կը յորդորէ Իսրայէլի վարչապետին միջամտիլ սոյն հարցին եւ դադրեցնել Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան դէմ Երուսաղէմի քաղաքապետարանի ձեռնարկած գործողութիւնները եւ խնդրին լուծում տալու նպատակով վերսկսիլ իր կողմէ նշանակուած կառավարական յանձնախումբին հետ հանդիպումները:

ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿԻ ԶՕՐԱՅՅՈՒԹԵԱՆ ԱՅՅ ՏՈՒԱԻ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

23 Փետրուար, 2025-ի առաւօտուն, Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Դերապայծառ Տ. Ատուլֆօ Արքեպիսկոպոս Տիտօ Լլանայ, ընկերակցութեամբ իր առաջին քար-

տուղար՝ Հայր Նիկողա Դի Պոնգիոյի՝ այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպման, որուն ներկայ էին նաեւ Սուրբ Աթոռոյս Կալուածոց տեսուչ՝ Գերաշնորհ Տ. Կորին Եպիսկոպոս Բաղդասարեան եւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան՝ քննարկուեցաւ Երուսաղէմի քաղաքապետարանին կողմէ Հայոց Պատրիարքութեան գոյքի բռնագրաւման անարդար որոշման եւ Պատրիարքութեանս պարտադրուող անտրամաբանական ահուելի պարտքի հարցը:

Գերապայծառ Տ. Ատուֆօ Արքեպիսկոպոս Տիտօ Ըլանայ իր մտահոգութիւնն ու զօրակցութիւնը յայտնեց Նորին Ամենապատուութեան եւ վստահեցուց, որ այս հարցին մէջ Վատիկանը Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Սուրբ Երկրի բոլոր քրիստոնէայ համայնքներու կողքին է:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՉՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՅԱՅԻ ՍՈՒՐԲ ԵՂԻԱ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

1 Մարտ, 2025-ին, Հայֆայի Սուրբ Եղիա Եկեղեցւոյ մէջ ուխտի Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Պատրիարքութեանս Հելէն եւ էտուարտ Մարտիկեան թանգարանի եւ Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան: «Հայր մեր»էն առաջ քարոզեց Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան:

Յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագի կատարուեցաւ Հոգեհոգիստ՝ Արծրունիներու թագաւորական տոհմի եւ Բեկ-Փիրումովներու իշխանական զինուորական տոհմի հետնորդ՝ էմիլ Փիրումովի հոգւոյ համար: Ապա կատարուեցաւ Սուրբ Եղիա Եկեղեցւոյ բակին մէջ հանգուցեալ էմիլ Փիրումովի նուիրատուութեամբ զետեղուած երկու խաչքարերու օրհնութեան կարգ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի եւ առընթերակայութեամբ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանի եւ Սուրբ Եղիա Եկեղեցւոյ տեսուչ՝ Արժանապատիւ Տ. Տիրայր Քահանայ Յովակիմեանի:

Խաչքարերու օրհնութեան արարողութենէ ետք Հայֆայի Հ.Մ.Ը.Մ. սրահին մէջ էմիլ Փիրումովի հոգւոյ համար հոգեճաշ տրուեցաւ, որու ընթացքին դարձեալ խօսք առաւ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան:

Խաչքարերու նուիրատուն՝ հանգուցեալ էմիլ Փիրումով, ապրելով եւ աշխատելով Մոսկուայի մէջ՝ մշտապէս կապուած էր հայրենիքին: Երբ անոր մտերիմ բարեկամ, այժմ Ատրպէյճանի մէջ գերի պահուող մեծանուն բարերար՝ Տիար Ռուբէն Վարդանեան Հայաստանի մէջ բարեգործական ծրագիրներ ձեռնարկեց, էմիլ անմիջապէս փութաց Հայաստան եւ ղեկավարեց Տաթևի վանական համալիրի «Տաթևեր» կոչուած ճոպանուղիի կառուցումը: Իսկ կառուցումէն ետք էմիլի անունը փորագրուեցաւ յուշատախտակին, իբրեւ բարեգործներէն մին: Անոր մասնակցութեամբ կառուցուած է նաեւ Դիլիջանի միջազգային դպրոցը:

Ան վեց տարիներ ապրեցաւ Իսրայէլի մէջ եւ անվերջ բուժումներէ եւ քիմիոթերապիաներէ ետք չկարողացաւ յաղթել չարաբաստիկ հիւանդութեան:

Թող Աստուած հոգին լուսաւորէ:

«Երանի՜ որ ունիցի յիշատակ ի սիրոն»:

ՕԾՈՒԵՑԱՆ ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՅԻՍՈՒՍԻ ՊԱՏԿԵՐԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՅ ՓՐԿՉԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

27 Մարտ, 2025-ի երեկոյեան, Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան, առընթերակայութեամբ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեանի եւ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանի՝ օժեց Նոր Երուսաղէմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ խորանի Սուրբ Աստուածածնի եւ Մանուկ Յիսուսի պատկերը եւ յարակից Փրկչական պատկերները:

Մինչ պատկերներու օծումը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեան նախ ջուրով, ապա գինիով լուաց Եկեղեցւոյ խորանի Սուրբ Աստուածածնի եւ Մանուկ Յիսուսի պատկերը եւ յարակից Փրկչական պատկերները, որմէ յետոյ Սաղմոսներու եւ Աղօթքներու ուղեկցութեամբ կատարուեցաւ պատկերներու օծման արարողութիւնը՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան Սրբազան Հօր:

ԿԻՍԱՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

28 Մարտ, 2025-ին, յետ Խաղաղական Ժամերգութեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ կատարուեցաւ Սարկաւագական կոչման արարողութիւնը՝ Սուրբ Աթոռոյս Երրորդ Ընծայարանի ուսանող Ուրարակիրներ՝ Տիրացու Շաւարշ Կարապետեանի, Տիրացու Էդգար Բաղդասարեանի, Տիրացու Յովհաննէս Խումարեանի, Տիրացու Ռուբէն Յակոբեանի, Տիրացու Խաչիկ Սարգսեանի եւ Տիրացու Նուէր Գեղամեանի:

Ընծայեալները ծնրադիր յառաջացան Դասի մուտքէն եւ Ձեռնադրիչ Սրբազան Հօրմէն ստացան Կիսասարկաւագութեան աստիճան՝ խարտաւիլակութեամբ Ժառանգաւորաց վարժարանի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեանի եւ առընթերակայութեամբ՝ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանի:

Ձեռնադրութենէն ետք, ընծայեալները կարմիր բազկուրարներ իրենց թեւերուն մեկնեցան Սուրբ Յարութեան Տաճար՝ մասնակցելու Տնօրինական Սուրբ Տեղեաց Թափօրին, իսկ գիշերասկզբին մասնակցեցան Սուրբ Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ պաշտուած «Եկեսցէի» եւ «Հսկման» արարողութեանց:

ՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

29 Մարտ, 2025-ին, Սեբաստիոյ Սուրբ քառասուն մանուկներու յիշատակութեան օրը, առաւօտեան ժամը 7-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան Ժամերգութիւններ, ապա Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ Սուրբ Գլխադրի մատրան մէջ: Պատարագեց Հոգեշնորհ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեան:

Պատարագի սկիզբն ազդարարող կոչնակի հարուածներու եւ Կոմիտասեան եղանակով «Խորհուրդ խորին» շարականին հետ սկսաւ Պատարագը եւ շարունակուեցաւ

մինչեւ Ճաշու գրքին ընթերցումը, ապա Սուրբ Աթոռոյս վեց կիսասարկաւագներ եւ Սուրբ Աստուածածնայ տաճարին ծառայող միաբան կիսասարկաւագ մը Սարկաւագական ձեռնադրութեան շնորհին արժանացան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ։ Որպէս խարտաւիլակ Հոգեշնորհ Տ. Գէորգ Վարդապետ Հայրապետեան ընծայեալները առաջնորդեց ձեռնադրիչ Սրբազան Հօր՝ իրեն առընթերակայ ունենալով Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեանը։

Ձեռնադրութենէ առաջ ընծայեալները ներկաներուն առջեւ կատարեցին իրենց ուխտը։

Ուխտէն յետոյ ընծայեալները ստացան ուրար՝ կրելու Տիրոջ քաղցր լուծը իրենց ուսերուն, Աւետարան՝ քարոզելու Տերունական ճշմարտութիւնները, Բուրվառ՝ հրաման խնկարկելու Ս. Եկեղեցւոյ մէջ խունկի անոյշ բոյրով լեցնելու տաճարը, ապագային դառնալու մէջ-մէկ ծխացող կնդրուկներ հայ եկեղեցւոյ տաճարէն ներս։

Ձեռնադրութենէն անմիջապէս յետոյ նորընծայ Բարեշնորհք Սարկաւագները կատարեցին Սուրբ Պատարագի սպասարկութիւնը։

Այս ուրախալի առիթով, նորընծայ սարկաւագներուն, որոնցմով Սուրբ Աթոռոյս սարկաւագներուն թիւը բարձրացաւ՝ սրտագինս կ'ըսենք.

«Բարեաւ գնացէք ընդ այս ճանապարհ...»։

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

